## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՎՇԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ավշար համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ավշար, Անդրանիկի 1
Հեռախոս (0234) 45314, (0234) 45179, avshar.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՄԱՅԻՍԻ 2017թվականի N 22-Ա

## ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի պահանջներով ավագանին որոշեց.

22- Ա

Հաստատել համայնքի ավագանու թիվ 05 հերթական նիստի օրակարգը:

1. ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
   /զեկ.Գ.Մ.Միրզոյան/
2. ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ
   /զեկ. Ս.Թ.Գրիգորյան/
3. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ
   /զեկ. Ս.Թ.Գրիգորյան
4. ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
   /զեկ. Ս.Թ.Գրիգորյան
5. ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ
   /զեկ. Հ.Գ.Ղուկասյան

կողմ / 7/ դեմ / 0/ ձեռնպահ / 0 /

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ԿԱՌԼԵՆ
2. ԶԱՔՈՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՇՈՏ
4. ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ ՍՄԲԱՏ
5. ՀԱԿՈԲՅԱՆ ԶԱՎԵՆ
6. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ
7. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՀՈՎՍԵՓ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.Թ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՎՇԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ավշար համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ավշար, Անդրանիկի 1
Հեռախոս (0234) 45314, (0234) 45179, avshar.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

22 ՄԱՅԻՍԻ 2017թվականի N 23-Ն

## ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդված 5-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ավագանին որոշեց.

23-Ն

Համայնքի գույքի (հողամասերի) պետական գրանցման և տեղեկատվություն ստանալու հետ կապված ծախսերը փոխհատուցելու համար վարչական բյուջեի պահուստային ֆոնդից /հոդված 4891/ 300.000 /երեք հարյուր հազար/ դրամ հատկացնել ընդհանուր բնույթի հանրային ծառայությունները ծախսային ծրագրի 4823 / պարտադիր վճարներ/ հոդվածին՝ նոր պլան սահմանելով 450000 /չորս հարյուր հիսուն հազար/ դրամ:

Բարձրագույն կրթություն 09.04.01 ծախսային ծրագրով ծախսեր փոխհատուցելու համար վարչական բյուջեի պահուստային ֆոնդից /հոդված 4891/ 250.000 /երկու հարյուր հիսուն հազար/ դրամ հատկացնել բարձրագույն կրթություն 09.04.01 ծախսային ծրագրի 4239 /այլ ծառայություններ/ հոդվածին՝ նոր պլան սահմանել 3.450.000 /երեք միլիոն չորս հարյուր հիսուն հազար/ դրամ:

Վարչական բյուջեի պահուստային ֆոնդի նոր պլան սահմանել 3.571.400 /երեք միլիոն հինգ հարյուր յոթանասունմեկ հազար/ դրամ:

կողմ / 7/ դեմ / 0/ ձեռնպահ / 0 /

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ԿԱՌԼԵՆ
2. ՋԱՔՈՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՇՈՏ
4. ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ ՍՄԲԱՏ
5. ՀԱԿՈԲՅԱՆ ԶԱՎԵՆ
6. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ
7. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՀՈՎՍԵՓ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.Թ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՎՇԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ավշար համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ավշար, Անդրանիկի 1
Հեռախոս (0234) 45314, (0234) 45179, avshar.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՄԱՅԻՍԻ 2017թվականի N 24-Ն

## ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ կայացրեց որոշում

**24 -- Ն**

Եկամուտների պլանը կատարվել է՝

| | |
|---|---|
| Հողի հարկ | 6.1% |
| Գույքահարկ | 32.2% |
| Տեղական տուրքեր | 65.2% |
| Հողի վարձավճար | 7.2% |
| Տեղական վճար /ջուր/ | 20.9% |
| Տեղական վճար /աղբ/ | 29.6% |

1.Ընդունել ի գիտություն համայնքի ղեկավարի առաջարկությունը 2017 թվականի մայիսի 22-ի դրությամբ բյուջեի կատարման ընթացքի մասին:

2. Բացատրական աշխատանքներ տանել հարկատուների շրջանում հողի հարկի վճարումները հնարավորինս ժամանակին կատարելու համար:

կողմ / 7/ դեմ / 0/ ձեռնպահ / 0 /

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ԿԱՌԼԵՆ
2. ԶԱՔՈՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՇՈՏ
4. ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ ՍՄԲԱՏ
5. ՀԱԿՈԲՅԱՆ ԶԱՎԵՆ
6. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ
7. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՀՈՎՍԵՓ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.Թ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՎՇԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ավշար համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ավշար, Անդրանիկի 1
Հեռախոս (0234) 45314, (0234) 45179, avshar.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՄԱՅԻՍԻ 2017թվականի N 25-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 16-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի զեկույցը , կայացրեց որոշում..

25-Ա

1. Աղբահանությունը համայնքի տարածքում իրականացնել «ՎԵՍՏ ՄԵՆԵՋՄԵՆՏ» ՍՊԸ -ի հետ կնքված պայմանգրի համաձայն և աշխատանքներ տանել բնակչության շրջանում, աղբահանության աշխատանքներին հատուկ ուշադրություն դարձնելու և զանձումները ժամանակին կատարելու համար:

կողմ /7/ դեմ /0/ ձեռնպահ /0/

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ԿԱՌԼԵՆ
2. ԶԱՔՈՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՇՈՏ
4. ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ ՍՄԲԱՏ
5. ՀԱԿՈԲՅԱՆ ԶԱՎԵՆ
6. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ
7. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՀՈՎՍԵՓ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.Թ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՎՇԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ավշար համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ավշար, Անդրանիկի 1
Հեռախոս (0234) 45314, (0234) 45179, avshar.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՄԱՅԻՍԻ 2017թվականի N 26-Ա

### ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 3-րդ հոդվածի 1-ին կետի , Հայաստանի Հանրապետության «Քաղաքաշինության մասին» օրենքի $14^3$ հոդվածի 9-րդ և 12-րդ մասերի , «Տեղական ինքնակառավարման» մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ կետի , ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Կառավարության 29-12.2011թվականի թիվ 1920-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Ավշար համայնքի ավագանու 17.03.2017թվականի թիվ 16-Ա որոշման պահանջները.

26-Ա

1.Թույլատրել համայնքի ղեկավարին Ավշար համայնքի վարչական տարածքի 03-013-0561-0038 ծածկագրի 20.22824հա գյուղատնտեսական նշանակության արոտավայրից 18.37301հա հողամասի նպատակային նշանակությունը փոխել արդյունաբերության , ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության , իսկ գործառնական նշանակությունը՝ ընդերքի օգտագործման համար տրամադրված հողամասի համաձայն գլխավոր հատակագծի:

2.Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նպատակային նշանակության փոփոխության մասին 10-ն օրյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին և Հայաստանի Հանրապետության Քաղաքաշինության նախարարությանը, կցելով այդ փոփոխությունը հաստատելու մասին համապատասխան սահմանված կարգով հաստատված պատճեներ:

կողմ / 7/ դեմ / 0/ ձեռնպահ / 0 /

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ԿԱՐԼԵՆ
2. ԶԱՔՈՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՇՈՏ
4. ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ ՍՄԲԱՏ
5. ՀԱԿՈԲՅԱՆ ԶԱՎԵՆ
6. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ
7. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՀՈՎՍԵՓ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.Թ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՎՇԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ավշար համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ավշար, Անդրանիկի 1
Հեռախոս (0234) 45314, (0234) 45179, avshar.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՄԱՅԻՍԻ 2017թվականի N 27-Ա

## ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 3-րդ հոդվածի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության «Քաղաքաշինության մասին»օրենքի $14^3$ հոդվածի 9-րդ և 12-րդ կետերի , Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ կետի, Հայաստանի Հանրապետության 29-12.2011թվականի թիվ 1920-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 88 որոշման, ինչպես նաև Ավշար համայնքի ավագանու 17.03.2017թվականի թիվ 16-Ա որոշման պահանջներով և հիմք ընդունելով քաղաքացիների դիմումները.

27-Ա

1. Թույլատրել համայնքի ղեկավարին՝ փոխելու քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող հողերի նպատակային և գործառնական նշանակությունը՝ համաձայն համայնքի պարզեցված գլխավոր հատակագծի.

ա/Նարգիզ Նվերի Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող 03-013-0807-0003 ծածկագրի 0.106 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը, փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության , իսկ գործառնական նշանակությամբ հասարակական կառուցապատման հողամասի , համաձայն գլխավոր հատակագծի:

բ/Արմեն Սուրիկի Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող՝

բ1/ թիվ 29032012-03-0034 վկայականի ՝ ծածկագիր 03-013-0497-0003, 0.296հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությանը՝ հասարակական կառուցապատման հողամասի, համաձայն գլխավոր հատակագծի:

բ2/ թիվ 2464722 վկայականի՝ ծածկագիր 03-013-0481-0013 , 0.5303 հա գյուղատնտեսական նշանակության վարելահողը փոխադրել բնակավայրի նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման հողամասի համաձայն գլխավոր հատակագծի:

բ3/թիվ 16092016-03-0022 վկայականի՝ ծածկագիր 03-013-0547-0006 , 3.0 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության , իսկ գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման հողամասի համաձայն գլխավոր հատակագծի:

բ4/ թիվ 2464723 վկայականի՝ ծածկագիր 03-013-0058-0014, 0.3802հա արտադրական նշանակության , գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողամասը փոխադրել բնակավայրերի , իսկ գործառնական նշանակությունը հասարակական կառուցապատման հողամասի, համաձայն գլխավոր հատակագծի:

թիվ 2464723 վկայականի շինության տվյալները բաժնի մեկից մինչև ներառյալ ութերորդ համարի 1603,98 քմ մակերեսով շինությունների օգտագործման նպատակը փոխել հասարակական սպասարկման օբյեկտների:

գ/ Սուրիկ Թեմուրի Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող՝

գ1/ Գ.Նժդեհի Փ.20/2 հասցեի (վկայական թիվ19062013-03-0036) 0.0273 հա արդյունաբերական ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությամբ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողամասը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակությանն, իսկ գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման հողամասի, համաձայն գլխավոր հատակագծի:

գ2/ թիվ 1823554 վկայականի (ծածկագիր 03-013-0497-0001) 0.9648հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման հողամասի, համաձայն գլխավոր հատակագծի:

գ3/ թիվ 1823553 վկայականի (ծածկագիր 03-013-0497-0002) , 0.84հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման հողամասի, համաձայն գլխավոր հատակագծի:

կողմ / 7/ դեմ / 0/ ձեռնպահ / 0 /

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ԿԱՌԼԵՆ
2. ՋԱՔՈՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՇՈՏ
4. ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ ՍՄԲԱՏ
5. ՀԱԿՈԲՅԱՆ ՋԱՎԵՆ
6. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ
7. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՀՈՎՍԵՓ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.Թ. ԳՐԻԳՈՐՅԱՆ